



ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԶՈՅԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի պրոֆեսոր, տնտեսագիտության դոկտոր

ԹԱԴԵՎՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Սույն հոդվածի շրջանակում իրականացվել է զբաղվածության պետական ծրագրերի և ծառայությունների կառուցակարգային և ընթացիկ արդյունքների համակողմանի վերլուծություն: Զբաղվածության պետական ծրագրերը և ծառայությունները, ըստ դրանցով նախատեսվող զբաղվածության պետական աջակցության բնույթի, ակնկալվող և փաստացի ստացված հիմնական արդյունքների, դասակարգվել են հինգ հիմնական խմբերի: Այսպիսով, հնարավոր է դարձել աշխատաշուկայի արդի պահանջներից բխող՝ զբաղվածության պետական կարգավորման ընթացիկ խնդիրների խորքային գնահատումը և դրանց ներուժի ավելացման հնարավորությունների հավելորդումը: Հետազոտական ամփոփ արդյունքների հիման վրա, այդ թվում՝ COVID-19 համավարակի դիտարկելից, մշակվել են զբաղվածության պետական ծրագրերի ընթացիկ բարեփոխումների հիմնական ուղղություններն ու հավաքական լուծումները: Ներկայացվել են նաև առաջարկվող լուծումների համակողմանի հիմնավորումները, ներուժային շահառուների կայուն և ժամանակավոր զբաղվածության ապահովման վրա խնդրո առարկա պետական ծրագրերի հնարավոր ազդեցության ամփոփ գնահատումները:

Հիմնաբառեր.

աշխատաշուկա, կայուն և ժամանակավոր զբաղվածություն, զբաղվածության կարգավորման ծրագիր, համավարակ, աշխատաշուկայում անմրցունակ անձ, գործազուրկ

JEL: J21, J48, R23

Ներածություն: Նոր համավարակով (COVID-19) պայմանավորված՝ ՀՀ աշխատաշուկայում արձանագրվող բացասական միտումները և հատկապես դրանց հետագա դրսևորման մեծ անորոշությունները զբաղվածության ոլորտում իրական մարտահրավերներ են: Այս մարտահրավերները առաջնահերթ կերպով առնչվում են ցածր եկամուտ ունեցող աշխատողներին, երկարատև գործազուրկներին, տնտեսական զարգացման միջին հանրապետականից ցածր մակարդակ ունեցող բնակավայրերին և վերջապես կարող են նաև հանդիսանալ աղքատության խորացման իրական գործոն: Մի կողմից՝ նշված մարտահրավերներին առավել արդյունավետ դիմակայելու, իսկ մյուս կողմից՝ տնտեսության զարգացման նոր պայմաններին ու պահանջներին համապատասխան գործելու նպատակով կարևորում ենք աշխատաշուկայի պետական կարգավորման նորովի մոտեցումների մշակումն ու իրականացումը, զբաղվածության պետական աջակցության գործող ծրագրերի ու ծառայությունների ընթացիկ բարեփոխումները:

Նշված ընդհանուր նպատակադրումներից բխող դիտարկման անհրաժեշտությունից ելնելով՝ սույն հոդվածի շրջանակում իրականացվել են զբաղվածության պետական կարգավորման իրավիճակային վերլուծություններ և գնահատումներ, ըստ այդմ՝ ներկայացվել են զբաղվածության քաղաքականության ընթացիկ բարեփոխումներին վերաբերող փաստարկված և արդիական եզրահանգումներ ու առաջարկություններ: Մասնագիտական վերլուծությունների հիման վրա ստացված արդյունքները կարող են օգտակար լինել զբաղվածության ոլորտում լիազոր պետական կառավարման մարմնին՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Մասնավորապես, հետազոտությունում տեղ գտած արդյունքները կիրառելի են ընթացիկ քաղաքականության՝ 2021 թ. զբաղվածության կարգավորման պետական ծրագրի մշակման, ինչպես նաև զբաղվածության քաղաքականության ընթացիկ բարեփոխումների՝ իրավիճակին համարժեք ծրագրային նոր լուծումներ ապահովելու նպատակով:

Գրականության ակնարկ: Հետազոտության առանձնահատկությունից և գործնական բնույթից ելնելով՝ հեղինակներն ուսումնասիրել են ՀՀ աշխատաշուկան կարգավորող գործող իրավական ակտերը, փաստաթղթերը և այլ նյութեր, գնահատել դրանց իրականացման արդյունավետությունը:

Սույն հոդվածի շրջանակում ուսումնասիրվել են տեսագործնական դիտարկումների որոշ աղբյուրներ, համակողմանի վերլուծվել են զբաղվածության պետական ծրագրերի գործող կառուցակարգերը, ընթացիկ արդյունքները, գնահատվել են զբաղվածության պետական աջակցության ներուժի ավելացման գործնական հնարավորությունները: Մասնավորապես, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր *Լարի Սամերսը* առանձնացնում է զբաղվածության խթանման հիմնական լուծումները՝ ըստ տարածաշրջանների ու առաջնահերթությունների (գծապատկեր 1)¹:

¹ St'u **Summers L.**, Persistent Jobless Growth, World Economic Forum, 2015, <http://reports.weforum.org/outlook-global-agenda-2015/top-10-trends-of-2015/2-persistent-jobless-growth/>:

Ասիա	Եվրոպա	Լատինական Ամերիկա
• Աշխատատեղերի ստեղծում • Թիրախավորված մասնագիտական հմտությունների զարգացում • Նորամուծությունների խթանում	• Աշխատատեղերի ստեղծում • Կրթության բարելավում • Կառավարության ներդրումներ	• Կրթության բարելավում • Նորամուծությունների խթանում • Աշխատատեղերի ստեղծում
Մերձավոր Արևելք և Հյուսիսային Աֆրիկա	Հյուսիսային Ամերիկա	Հարավային Աֆրիկա
• Աշխատատեղերի ստեղծում • Նորամուծությունների խթանում • Կրթության բարելավում	• Կրթության բարելավում • Աշխատատեղերի ստեղծում • Կառավարության ներդրումներ	• Նորամուծությունների խթանում • Աշխատատեղերի ստեղծում • Թիրախավորված մասնագիտական հմտությունների զարգացում

Գծապատկեր 1. Զբաղվածության խթանման լուծումները

Աշխատանքի միջազգային կազմակերպության հետազոտական զեկույցում² ներկայացվում են Հայաստանում COVID-19 համավարակի ընթացքում զբաղվածության վրա ազդեցությունների գնահատականներ, հրատապ ու երկարաժամկետ լուծումների առաջարկություններ, որոնց էական մասը հենվում է զբաղվածության քաղաքականության ու ծրագրերի նորովի վերափոխումների, աշխատաշուկայի նոր հնարավորությունների գործարկման վրա: Զեկույցում անդրադարձ է կատարվում նաև Հայաստանում առցանց աշխատանքի ու առցանց աշխատանքային շուկաների (հարթակների) օրենսդրական ու աջակցային կառուցակարգերի մշակման անհրաժեշտությանը:

ՀՀ օրենսդրական կարգավորումների համաձայն³ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մշակում է զբաղվածության պետական քաղաքականություն և իրականացնում զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի (այսուհետ՝ նաև ամենամյա ծրագիր) միջոցով՝ համագործակցելով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական գործընկերների, գործատուների, շահագրգիռ այլ կազմակերպությունների և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց հետ: Զբաղվածության պետական քաղաքականության առանձնահատկությունն այն է, որ միաժամանակ ունի և՛ տնտեսական, և՛ սոցիալական կարգավորման նպատակադրումներ:

Զբաղվածության քաղաքականության այս նպատակադրումներից բխող հիմնական թիրախներ են սահմանված ՀՀ Կառավարության հնգամյա ծրագր-

² Տե՛ս **Campbell D., Ronnås P., Sargsyan A.** (in alphabetical order), A rapid assessment of the employment impact and policy responses of the Covid-19 pandemic on Armenia, International Labour Organization, August 2020:

³ Տե՛ս «Զբաղվածության մասին» 2013 թ. դեկտեմբերի 11-ի ՀՀ-152-Ն ՀՀ օրենք, ՀՀ Կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» N 534-Ն որոշում:

րի 4.2-րդ բաժնում⁴, մասնավորապես՝ բնակչության անապահով խավի շրջանում կրթության և աշխատանքի քաջալերումը, գործարարությունը խթանող ծրագրերի իրականացումը, զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականության բարձրացումը, նոր ծրագրերի ներդրումը՝ նպատակաուղղված աշխատաշուկայում երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց մրցունակության բարձրացմանը, կրթություն–աշխատաշուկա փոխառնչությունների խթանմանը, առկա թափուր աշխատատեղերի համալրմանը: Այս թիրախներին համարժեք՝ զբաղվածության ոլորտի ծախսային գերակայությունները ձևակերպված են ՀՀ Կառավարության 2020-2022 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում⁵:

Ակայակոչված նպատակադրումներից բխող հիմնախնդիրները բացահայտելու, դրանց գործնական դրսևորումները գնահատելու, զբաղվածության պետական քաղաքականության զարգացման միտումները վերլուծելու, ինչպես նաև առկա հիմնախնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելու նպատակով ուսումնասիրվել և վերլուծվել են զբաղվածության պետական ծրագրերի մշակման, իրականացման, մշտադիտարկման, գնահատման գործընթացներն ու ընթացիկ արդյունքները:

Հետազոտության մեթոդաբանություն: Հաշվի առնելով հետազոտության նպատակներն ու խնդիրները՝ սույն հոդվածի շրջանակում կիրառվել են համեմատական, թվային, երկրորդային տվյալների վերլուծության, փորձագիտական գնահատումների, իրավական վերլուծության, ռազմավարական կառավարման և պլանավորման մեթոդները: Անհրաժեշտ տեղեկությունների հավաքագրման աղբյուրները ՀՀ Կառավարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքերն են, նախարարության աշխատակազմի, աշխատանքի և զբաղվածության վարչությունից ստացված հարցումների տվյալները, ՀՀ իրավական տեղեկատվական համակարգը և այլն:

Ուսումնասիրությունների համար հիմք են հանդիսացել զբաղվածության ոլորտին վերաբերող իրավական ակտերը, ռազմավարական և միջնաժամկետ ծրագրերը, ինչպես նաև զբաղվածության կարգավորման 2018-2019 թթ. պետական ծրագրերը, այդ ծրագրերի՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված կատարողական գեկույցները:

Իրականացվել է այդ ծրագրերի կառուցակարգերի համեմատական վերլուծություն, ըստ այդմ՝ արձանագրվել են ծրագրային հիմնական նպատակադրումներից բխող խնդիրները: Համակողմանի վերլուծվել են նախորդ երկու տարիների ամենամյա ծրագրերի փաստացի արդյունքները, գնահատվել են ակնկալվող և փաստացի արդյունքների շեղումների հիմնական պատճառներն ու հետևանքները՝ ըստ զբաղվածության պետական կարգավորման ծրագրերի: Գնահատվել են զբաղվածության պետական կարգավորման ներուժի ավելացման հնարավորությունները և մշակվել են զբաղվածության պետական ծրագրերի հավաքական արդյունավետության բարձրացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

⁴ <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

⁵ <https://www.gov.am/files/docs/3502.pdf>

Վերլուծություն

Զբաղվածության պետական քաղաքականության կառուցակարգային հարցերը

Զբաղվածության պետական քաղաքականության գործող մոդելը, առնվազն հիմնական նպատակադրումների տեսանկյունից, արդիական է, իսկ բնույթով՝ ռազմավարական: Առկա կարգավորումներն ու սահմանված կառուցակարգերը, ընդհանուր առմամբ, կարող են բավարար իրավական հիմք ապահովել սահմանված գերակայություններին համապատասխան քաղաքականություն մշակելու և իրականացնելու համար: Սակայն այս նոր մոդելի ներդրումից հետո՝ 2014 թվականից ի վեր, դրա գործադրման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ, տեղեկատվական և գործառնական հիմքերը դեռևս լիարժեքորեն ապահովված չեն: Առանց նշված հիմքերի, գործնականում անհնար է զբաղվածության քաղաքականության հիմնական նպատակադրումներից բխող ծրագրային գերակայությունների ապահովումը: Այս հիմնախնդիրներն, ըստ ուղղությունների, մանրամասնորեն ներկայացված են հաջորդիվ:

Ուսումնասիրությունը փաստում է, որ գլոբալ աշխատաշուկան ունի անկման որոշակի միտումներ, և ներկայումս ինչպես առանձին տնտեսություններում, այնպես էլ համաշխարհային մակարդակում վերակառուցման և ճգնաժամային կառավարման նոր մեթոդների կիրառման խնդիր է դրվում: Մյուս կողմից, զբաղվածության և աշխատաշուկայի կարգավորումը բարդ խնդիր է, շաղկապված է մեծ թվով գործոնների հետ: Զարգացող տնտեսություններում, այդ թվում՝ Հայաստանում, այս ուղղությամբ անհրաժեշտ է կիրառել պետական կարգավորման նոր գործիքներ, որի դեպքում հաշվի կառնվեն զբաղվածության և մակրոտնտեսական քաղաքականության փոխառնչությունները:

Ըստ էության, կարծում ենք, ՀՀ աշխատաշուկայում կայուն անհավասարակշռության հաղթահարումն ուղեկցվում է նաև գործազրկության բարձր մակարդակով: Այն պահանջում է օրենսդրական, ինստիտուցիոնալ և գործառնական համալիր բարեփոխումներ, որոնց իրականացումը մեծապես պայմանավորված է հետևյալ հիմնական ուղղություններով թիրախավորված քաղաքականության առկայությամբ՝

1. օրենսդրության օպտիմալություն,
2. զբաղվածության պետական քաղաքականություն,
3. մակրոտնտեսական քաղաքականություն:

Որպես նշված երեք ուղղությունների համակարգային ուղենիշ՝ մասնավորապես դիտարկվում են ձեռնարկատիրական ոլորտի պետական աջակցության, աշխատանքային իրավունքների, աշխատանքի վարձատրության ու զբաղվածության օրենսդրությունների համապատասխանության ապահովումն ու հավասարակշռումը և մակրոտնտեսական քաղաքականության ուղեկցումն այնպես, որ դրանք հավաքական առումով նպաստեն երկրում աշխատանքային իրավունքների պաշտպանության, վարձատրության գործունե համակարգի ու վերջապես՝ ակտիվ զբաղվածության զարգացմանը:

Զբաղվածության քաղաքականության առավել ճկուն իրականացման նպատակով նախ անհրաժեշտ է համարժեք պետական ֆինանսավորում և, ինչն ամենակարևորն է, զբաղվածության ծրագրերի ֆինանսական ճկուն կառավարման հնարավորություն, որոնք ընթացիկ տարիներին, փոփոխվող

իրավիճակից բխող զբաղվածության ծրագրերի միջոցով, աշխատաշուկային ճկուն արձագանքման հնարավորություններ կապահովեն: Խնդրի կարևորությունն ակնհայտ դրսևորվեց COVID-19 համավարակի պայմաններում, որի դեպքում, բացի ՀՀ Կառավարության թիրախային ծրագրերից, զբաղվածության ծրագրերը հնարավոր կլինի իրականացնել ավելի ինտենսիվ՝ վերապլանավորելով ծրագրային բովանդակությունը, թիրախն ու շրջանակը:

Մյուս կողմից, գործող ծրագրերին լրացուցիչ միջոցներ հատկացնելու և ըստ անհրաժեշտության նոր ծրագրեր փորձարկելու համար պահուստային ֆինանսավորման նախատեսումն օբյեկտիվորեն սահմանափակում է միջ-ծրագրային վերաբաշխման հնարավորությունը: Ծրագրային բյուջետավորման շրջանակում սա շատ կարևոր և անհրաժեշտ նախապայման է՝ ամենամյա ծրագրի արդյունքային ցուցանիշների թիրախային արժեքները թույլատրելի շեղումների սահմաններում ապահովելու տեսանկյունից: Հակառակ պարագայում, զբաղվածության պետական ծրագրերին հատկացված միջոցները տարվա ընթացքում մի շարք վերաբաշխումների հետևանքով գործնականում ձևավորելու են ամենամյա ծրագրով թիրախավորված ակնկալվող արդյունքների և փաստացի ստացված արդյունքների էական շեղումներ:

Զբաղվածության յուրաքանչյուր պետական ծրագրի իրականացման հավաքական արդյունավետության տեսանկյունից, առաջնային ազդող գործոններ են դրանց մշտադիտարկումն ու գնահատումը: Այս գործընթացներն օբյեկտիվորեն անհրաժեշտ են զբաղվածության պետական ծրագրերի նպատակային կառավարման համար: Մշտադիտարկման միջոցով է հնարավոր զբաղվածության պետական ծրագրերի՝ թիրախային ցուցանիշներից ընթացիկ շեղումների օպերատիվ բացահայտումը և պատճառների վերացման լուծումների գործադրումը: Ստացված մշտադիտարկման արդյունքները հնարավոր են դարձնում նաև զբաղվածության պետական ծրագրերի կատարողական արդյունավետության և հետագայում այդ ծրագրերի շարունակության նպատակահարմարության ընթացիկ և ամփոփ գնահատումը: Մշտադիտարկմամբ ստացված արդյունքներն առանցքային են այդ ծրագրերի հասցեականությունն ու նպատակայնությունն ապահովելու և ընթացակարգային բացթողումները վերացնելու գործընթացներում:

Մշտադիտարկման և գնահատման, ինչպես նաև ստացված արդյունքները օրենքով սահմանված հիմնական նպատակներին ծառայեցնելու գործընթացների լիարժեքությունը, արժանահավատությունը և արդյունավետությունը պահանջում են անհրաժեշտ ողջ տեղեկության և հաշվետվությունների ինքնաշխատ եղանակով ստացում և հասանելիության ապահովում: Այս նպատակով անհրաժեշտ է մշակել նորարարական տեղեկատվական համակարգեր, որոնք թույլ կտան զբաղվածության պետական ծրագրերի նպատակային կառավարման լիարժեք գործադրում, տեղեկատվության ճկունություն և օպերատիվ որոշումների ընդունում:

Զբաղվածության պետական քաղաքականության գործող մոդելի հենասյուներից է զբաղվածության պետական ծրագրերի համար (բացառությամբ ժամանակավոր զբաղվածության աջակցության ծրագրերի) կայուն զբաղվածության ապահովման պայմանը, որի չափանիշներն ու չափորոշիչները, ըստ զբաղվածության պետական ծրագրերի, օրենքի պահանջով սահմանում է ՀՀ

Կառավարությունը⁶: Հավաքական այս ցուցանիշի ներդրման նպատակը զբաղվածության պետական աջակցության ակնկալվող հիմնական արդյունքի՝ շահառուների աշխատանքի տեղավորման և ինքնազբաղվածության կայունության և ծախսարդյունավետության ապահովումն է: Կայուն զբաղվածության ցուցանիշների սահմանումը և յուրաքանչյուր տարի իրականացվող զբաղվածության պետական ծրագրերի համար դրանց թիրախավորումն անհրաժեշտ նախապայման են զբաղվածության պետական աջակցության գործընթացների նպատակային կառավարման և ծրագրային բյուջետավորման իրականացման համար: Այս ցուցանիշների համակարգի գործադրմամբ է միայն հնարավոր զբաղվածության պետական աջակցության որակական գնահատումը: Արդյունավետության համալիր գնահատումը և հետևողական բարձրացումը օբյեկտիվորեն պահանջում են ոչ միայն քանակական, այլև որակական արդյունքների դիտարկում:

Այլ կերպ ասած՝ զբաղվածության պետական աջակցության արդյունքում կարևոր է ոչ միայն աշխատանքի տեղավորված կամ ինքնազբաղված անձանց քանակը, այլև առավել կարևոր են վարձու աշխատողի կամ ինքնազբաղված անձի կարգավիճակում նրանց մնալու տևողությունը և այդ ընթացքում նրանց ստացած եկամուտների, վճարած եկամտային հարկի ու ստացած աջակցության չափերի հարաբերակցությունը: Հակառակ դեպքում, կառավարելի չի լինելու իրական և բարձր այն ռիսկը, ըստ որի՝ գործազուրկին աշխատանքի տեղավորելու համար գործատուն կստանա պետական աջակցություն, հաջորդիվ էլ աշխատանքից կազատի աշխատանքի տեղավորված այդ անձին: Կունենանք ինքնանպատակ ծրագրեր՝ պետական բյուջեից կատարված ոչ նպատակային ծախս, իսկ պետական աջակցություն ստացած քաղաքացու խնդիրը կմնա չլուծված:

Նկարագրված այս ռիսկերը կառավարելի դարձնելու նպատակով 2014 թ. ներդրվեցին կայուն զբաղվածության ցուցանիշների համակարգը և դրանից բխող՝ պետական աջակցությունը ստանալուց հետո մեկ-երկու տարի աշխատանքի տեղավորված անձի հետ աշխատանքային հարաբերությունները շարունակելու պայմանը: Վերջինիս խախտման դեպքում պետական աջակցությունը համարվում է ոչ նպատակային, և տրամադրված միջոցները վերադարձման են ենթակա պայմանը խախտած անձանց կողմից:

Այս տեսանկյունից, որպես ուշագրավ խնդիր կարելի է արձանագրել այն, որ որոշ խումբ շահառուների համար 2019 թվականից հանվել է զբաղվածության պետական ծրագրերի շրջանակներում ստացած ֆինանսական միջոցների վերադարձման պայմանը: Այսինքն, այս պարագայում վերացվել է ծրագրերի ռիսկերի կառավարման բաղադրիչը: 2019 թ. կատարված փոփոխություններով խախտվել է նաև զբաղվածության պետական աջակցություն տրամադրելու ժամանակահատվածի և այդ աջակցությունն ավարտվելուց հետո աշխատանքային հարաբերությունները շարունակելու ժամանակահատվածի արդյունավետ հարաբերակցությունը: Մասնավորապես, աջակցության գումարները և (կամ) դրանց տրամադրման ժամկետներն ավելացել են առավել մեծ չափերով, քան աշխատանքային հարաբերությունները շարունակելու

⁶ Տե՛ս ՀՀ Կառավարության՝ 2014 թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշում:

ծրագրային պայմանը⁷: Այս փոփոխությունների հետևանքով առաջացած անհամամասնությունները գործնականում որոշակիորեն թուլացնում են զբաղվածության պետական ծրագրերի ռիսկերի կառավարումը: Զբաղվածության պետական ծրագրերի կառուցակարգերի վերը նկարագրված փոփոխությունները հիմնականում բացասական ազդեցություն ունեն նաև ծրագրերի ծախսարդյունավետության տեսանկյունից: Մյուս կողմից, անհրաժեշտ սահմանափակումները հանելու կամ նվազեցնելու միջոցով էապես հեշտացվել են այդ ծրագրերի իրականացման գործընթացները, որի արդյունքում հնարավոր եղավ 2019 թ. ապահովել բարձր կատարողական:

2019 թ. իրականացվել են նաև որոշ դրական փոփոխություններ. բարելավվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանները: Սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձանց ընտանիքներն այդ պատճառով սոցիալական աջակցության պետական ծրագրերից օգտվելու հնարավորությունից չեն զրկվում: Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականությունը մեծացնելու և շահառուների շրջանակն ընդլայնելու նպատակով աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշները լրացվել են նոր չափանիշներով, այն է՝ մանկատան շրջանավարտ լինելը, զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ լինելը, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող անձ լինելը և այլն:

Ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստացող ընտանիքին հնարավորություն է տրվել, ընտանիքի աշխատունակ անդամների աշխատանքի անցնելու դեպքում, վեց ամիս շարունակելու ստանալ նպաստը (գործում է 01.04.2020 թվականից) և օգտվելու զբաղվածության պետական ծրագրերից: Սա կունենա կարճաժամկետ արդյունք: Վերջին հաշվով, վեց ամիս հետո նպաստը դադարեցնելու պարագայում այդ ընտանիքների իրական եկամուտները կնվազեն, և նորից առաջ կգա նվազագույն կենսապահովման խնդիրը: Հետևաբար, բարձր է մնում ռիսկը, որ այդ ընտանիքների անդամները նորից կանցնեն սովորաբար զբաղվածության՝ նպաստ ստանալու ակնկալիքով և թողնելով իրենց օրինական աշխատանքը:

Պետական աջակցությամբ «նպաստից դեպի օրինական աշխատանք» նպատակադրումը լիարժեքորեն կյանքի կոչելու համար իրականում անհրաժեշտ է ոչ թե նպաստի տրամադրման ժամկետի որոշակի երկարաձգում, որն իրականացվել է 2019 թ. փոփոխություններով, այլ զբաղվածության պետական ծրագրերի վերափնաստավորում և համարժեք աջակցության ներուժի ապահովում: Այս իմաստով, առավել հատկանշական են զբաղվածության պետական այն ծրագրերն ու ծառայությունները, որոնց անմիջական արդյունքը շահառուին հարմար աշխատանքի տեղավորման կամ ինքնազբաղվածության միջոցով նրա կայուն զբաղվածության ապահովումն է:

⁷ Տե՛ս «Հառավարության ծրագրի 2019 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց»՝ հավանություն է տրվել ՀՀ Հառավարության 2020 թ. փետրվարի 27-ի N 199 - Ա որոշմամբ, հավելվածի կետ 4.2:

Զբաղվածության պետական ծրագրերի ընթացիկ արդյունքները

2020-2022 թթ. զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի յուրաքանչյուր տարվա համար նախատեսվող գումարներն անփոփոխ են և կազմում են 1,825,353.8 հազ. դրամ⁸, որը սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր ծախսի 0,38%-ն է: Պահպանվող այս ցածր ցուցանիշն ինքնին համարժեք չէ զբաղվածության պետական քաղաքականության ռազմավարական հիմնական նպատակադրումներին և թիրախներին⁹, ՀՀ Կառավարության հնգամյա ծրագրի գերակայություններին¹⁰, ինչպես նաև աշխատաշուկայի ընթացիկ իրավիճակից բխող մարտահրավերներին: Ավելին, այս ցուցանիշը 2020-2022 թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրում (ՄԺԾԾ) ունի նվազման միտում, եթե նկատի ունենանք, որ նախատեսված է սոցիալական պաշտպանության ոլորտի ընդհանուր ծախսի որոշակի ավելացում, իսկ ամենամյա ծրագրի համար նախատեսված ծախսային գումարներն անփոփոխ են:

Զբաղվածության կարգավորման 2019 թ. պետական ծրագրի¹¹ համեմատ, 2020 թ.¹² պետական ծրագրի համար պետական բյուջեով նախատեսված միջոցներն ավելացել են 5%-ով: 2020 թ. ծրագրում որոշակիորեն բարձրացվել է կայուն զբաղվածության միջինացված գործակիցը. 2019 թ. 50%-ի փոխարեն, 2020 թ. թիրախավորված է 66,1%: Կարևոր է բարձրացման այս տեմպի պահպանումը հաջորդ տարիներին՝ նկատի ունենալով նաև, որ զբաղվածության պետական ծրագրերը հիմնականում ունեն կայուն զբաղվածության գործակիցի 90-95% ապահովման իրական ներուժ:

Սակայն, մյուս կողմից, նախորդ տարվա ամենամյա ծրագրի համեմատ, 2020 թ. ծրագրում նվազեցվել են արդյունքային հետևյալ ցուցանիշները.

- ծրագրերում ընդգրկված շահառուների ընդհանուր թիվը՝ 33,6%-ով,
- ծրագրերում ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ գրեթե կրկնակի անգամ,
- ծրագրերի իրականացման արդյունքում կայուն զբաղվածությամբ ապահովված շահառուների թիվը՝ 30,5%-ով:

Սա կարող է բացասական ազդեցություն թողնել զբաղվածության պետական ծրագրերի ծախսարդյունավետության միջին ցուցանիշի վրա. ֆինանսավորումն ավելանում է, իսկ արդյունքային ցուցանիշները նվազում են: Ընթացիկ արդյունքների թիրախավորումների նվազեցումը խորացնում է խզումը ռազմավարական նպատակադրումներից: Այս միտումն անիրական է դարձնում երկարաժամկետ ծրագրային գերակայությունների և նպատակների իրագործումը:

Խնդրահարույց է նաև այն, որ արդյունքային որոշ ցուցանիշներ, որոնք հստակ թիրախավորում են ունեցել նախորդ տարիներին, ընդհանրապես թիրախավորված չեն զբաղվածության կարգավորման 2020 թ. ծրագրով: Այդ

⁸ Տե՛ս «ՀՀ 2020-2022 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր»՝ հաստատվել է ՀՀ Կառավարության 2019 թ. հուլիսի 10-ի N 900-Ն որոշմամբ:

⁹ Տե՛ս «Աշխատիր, Հայաստան» ռազմավարություն, ՀՀ Կառավարության 2019 թ. դեկտեմբերի 5-ի N 1753-Լ որոշման 2-րդ հավելված:

¹⁰ Տե՛ս ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշման հավելվածի 4.2 կետ:

¹¹ Տե՛ս ՀՀ Կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի N 1024-Լ որոշում՝ Զբաղվածության կարգավորման 2019 թ. պետական ծրագիր, 3-րդ հավելված:

¹² Տե՛ս ՀՀ Կառավարության 2019 թ. սեպտեմբերի 30-ի N 1290-Լ որոշում՝ Զբաղվածության կարգավորման 2020 թ. պետական ծրագիր, 3-րդ հավելված:

ցուցանիշներն օբյեկտիվորեն անհրաժեշտ են զբաղվածության պետական գործակալության և դրա կազմում գործող 51 տարածքային կենտրոնների աշխատանքի արդյունավետությունը գնահատելու համար: Խոսքը վերաբերում է զբաղվածության տարածքային կենտրոնների միջնորդությամբ և ծրագրերի արդյունքում աշխատանքի տեղավորվածների ցուցանիշներին:

Զբաղվածության պետական քաղաքականության ընթացիկ արդյունքների դիտարկման համատեքստում բնութագրական են ոչ միայն հաստատված ամենամյա ծրագրերը և դրանց ակնկալվող արդյունքները, այլ նաև ամենամյա ծրագրի և դրանում ներառված զբաղվածության պետական ծրագրերի ու ծառայությունների կատարողականները՝ պետական բյուջեով նախատեսված և փաստացի ապահովված ֆինանսական ու ոչ ֆինանսական ցուցանիշների շեղումները և վերջին տարիներին դրանց դրսևորած միտումները:

Մասնավորապես, 2018 թ. պետական բյուջեով ամենամյա ծրագրի իրականացման համար նախատեսված էր 1,627,449.5 հազ. դրամ, փաստացի ծախսը (ֆինանսական կատարողականը)՝ 27,2%: Տարվա ընթացքում ֆինանսական միջոցների ճշտումից հետո պետական բյուջեով ամենամյա ծրագրի համար նախատեսված ֆինանսական միջոցները կրճատվել են 56%-ով: 2019 թ. պետական բյուջեով ամենամյա ծրագրի իրականացման համար նախատեսված էր 1,732,872.9 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 98,9%: 2019 թ. ամենամյա ծրագրի ճշտված բյուջեն ավելացել է 17%-ով: Այսպիսով, փաստացի ծախսը կազմել է ճշտված բյուջեի 84,5%-ը: Ամենամյա ծրագրի 2019 թ. ֆինանսական կատարողականը շուրջ 3,6 անգամ բարձր է եղել նախորդ տարվա ցուցանիշից: Կատարողական այս բարձր ցուցանիշը հնարավոր եղավ ապահովել զբաղվածության պետական ծրագրերի համար պետական բյուջեով նախատեսված միջոցների միջծրագրային վերաբաշխման արդյունքում: Ըստ այդմ՝ զբաղվածության պետական ցածր կատարողական ունեցող մի շարք ծրագրերի շուրջ 581 մլն ՀՀ դրամի չափով միջոցները (2019 թ. Զբաղվածության ծրագրերի վրա կատարված փաստացի ծախսի շուրջ 34%-ը) վերաբաշխվեցին և լրացուցիչ հատկացվեցին աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության ծրագրին¹³: Զբաղվածության պետական ծրագրերի կայուն զբաղվածության և ծախսարդյունավետության միջին ցուցանիշների ապահովման տեսանկյունից միջծրագրային այս խոշոր վերաբաշխումը որոշակիորեն խնդրահարույց է. անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության ծրագրի՝ մեկ շահառուի կայուն զբաղվածության ապահովման հաշվով ծախսն ավելի բարձր է մյուս ծրագրերի համապատասխան միջին ցուցանիշից:

Զբաղվածության կարգավորման 2019 թ. պետական ծրագրի¹⁴ և այս ծրագրով ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների¹⁵ վերաբերյալ տվյալների համադրմամբ արձանագրվել են զբաղվածության պետական գոր-

¹³ Զբաղվածության կարգավորման 2018 և 2019 թթ. պետական ծրագրերով տվյալ տարիներին ծախսված և ճշտված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:

¹⁴ Տե՛ս ՀՀ Կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի N 1024-Լ որոշում՝ Զբաղվածության կարգավորման 2019 թ. պետական ծրագիր, 3-րդ հավելված:

¹⁵ Այս տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:

ծակալության աշխատանքի արդյունավետության գնահատման տեսանկյունից բնութագրական հետևյալ փաստերը: Խոսքը վերաբերում է 2019 թ. արդյունքային հետևյալ հիմնական ցուցանիշների թերակատարումներին՝

- զբաղվածության տարածքային կենտրոնների միջնորդությամբ աշխատանքի տեղավորվածների ընդհանուր թիվը ծրագրվել էր 5230, սակայն փաստացի ապահովվել է դրա 46%-ը,
- զբաղվածության տարածքային կենտրոնների միջնորդությամբ և ծրագրերի արդյունքում աշխատանքի տեղավորվածների ընդհանուր թիվը ծրագրվել էր 12067, սակայն փաստացի ապահովվել է դրա 44%-ը:

Ոչ ֆինանսական այս ցուցանիշների կատարողականի գնահատման առումով հատկանշական են նաև հետևյալ արձանագրումները՝

- զբաղվածության պետական ծրագրերին հատկացված միջոցների 98,9%-ը ծախսվել է,
- զբաղվածության պետական գործակալության համար նախատեսված պահպանման ծախսերն իրականացվել են շուրջ 100%-ով:

Զբաղվածության կարգավորման 2021 թ. պետական ծրագրի մշակման նպատակով կարևոր են նաև, ըստ զբաղվածության պետական ծրագրերի և ծառայությունների, 2020 թ. ամենամյա ծրագրով նախատեսված և 2019 թ. փաստացի արձանագրված ոչ ֆինանսական ցուցանիշների համեմատման արդյունքները: Այս նպատակով համադրվել են զբաղվածության կարգավորման 2020 թ. պետական ծրագրի¹⁶ և 2019 թ. ծրագրով ծախսված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների¹⁷ տվյալները:

Համեմատական գնահատումների արդյունքում վեր են հանվել հատկանշական որոշ խնդիրներ, որոնք վերաբերում են զբաղվածության պետական ծրագրերի և ծառայությունների ոչ ֆինանսական ցուցանիշների թիրախավորմանն ու փաստացի ապահովմանը, մասնավորապես.

- առանց զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում ընդգրկելու, աշխատանք փնտրող անձանց աշխատանքի տեղավորման միջնորդության ծառայությունից 2019 թ. փաստացի օգտվել է 10375 անձ, սակայն 2020 թ. համար թիրախավորվել է դրանից շուրջ 27%-ով պակաս ցուցանիշ,
- գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած աշխատանք փնտրող անձանց մասնագիտական ուսուցման ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը կազմում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 53%-ը,
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը կազմում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 38%-ը,

¹⁶ Տե՛ս ՀՀ Կառավարության 2019 թ. սեպտեմբերի 30-ի N 1290-Լ որոշում՝ Զբաղվածության կարգավորման 2020 թ. պետական ծրագիր, 2-րդ հավելված:

¹⁷ Այս տվյալները ստացվել են ՀՀ ԱՍՀՆ աշխատակազմի աշխատանքի և զբաղվածության վարչությունից:

- ձեռք բերած մասնագիտությամբ աշխատանքային փորձ կուտակելու համար գործազուրկներին աջակցության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը կազմում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 67%-ը,
- 2019 թ. փաստացի իրականացվել է աշխատանքի 10 տոնավաճառ՝ 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի չափով,
- գործազուրկին իր բնակավայրից առնվազ 30 կմ հեռավորությամբ այլ վայրում աշխատանքի տեղավորմանն աջակցության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը կազմում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 55%-ը,
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը կազմում է 2019 թ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 67%-ը, իսկ 2020 թ. համար նախատեսվածի 79%-ը,
- հաշմանդամություն ունեցող անձին աշխատանքի տեղավորման դեպքում աշխատատեղի հարմարեցման աջակցության ծրագիրը 2019 թ. փաստացի չի իրականացվել, սակայն 2019 թ. նախատեսված էր 25 շահառուների համար, այսչափ նախատեսված է նաև 2020 թ.,
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց հարմար աշխատանքի տեղավորման նպատակով գործատուին այցելության համար դրամական օգնության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը բավականին բարձր է մյուս ծրագրերի համեմատ. կազմում է 2019 թ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 88%-ը, սակայն 2020 թ. այս ծրագրի համար միջոցներ նախատեսված չեն,
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը շուրջ 62%-ով գերազանցում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշը,
- աշխատաշուկայում անմրցունակ անձանց՝ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը շուրջ 22 անգամ գերազանցում է 2019 թ. համար նախատեսված ցուցանիշը և 16 անգամ էլ՝ 2020 թ. համար նախատեսված ցուցանիշը,
- սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը կազմում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի շուրջ 63%-ը,
- աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող երիտասարդ մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը շուրջ 4%-ով գերազանցել է 2019 թ. համար նախատեսվածը, իսկ 2020 թ. համար նախատեսված է նախորդ տարվա փաստացի կատարողականից շուրջ 80%-ով բարձր ցուցանիշ,
- մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ երեխայի մինչև երկու տարին լրանալը

աշխատանքի վերադառնալու դեպքում, երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը շուրջ 13%-ով գերազանցել է 2019 թ. համար նախատեսվածը, իսկ 2020 թ. համար նախատեսված է նախորդ տարվա փաստացի կատարողականից շուրջ 32%-ով բարձր ցուցանիշ,

- 2019 թ. փաստացի իրականացվել է վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման 96 ծրագիր, և այս ծրագրերի 2019 թ. փաստացի կատարողականը շուրջ 60%-ով գերազանցում է 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշը:

Վերը նշված խնդիրները, ընդհանուր առմամբ, վերաբերելի են նաև նախորդ միջնաժամկետ հատվածին, և անհրաժեշտ է լիարժեքորեն հաշվի առնել զբաղվածության կարգավորման 2021 թ. պետական ծրագրի մշակման գործընթացներում:

Զբաղվածության պետական կարգավորման ներուժի ավելացման՝ գնահատված հնարավորությունները

1. Աշխատաշուկայի նոր մարտահրավերներին արդյունավետ դիմակայելու և զբաղվածության նոր խնդիրների, այդ թվում՝ COVID-19 համավարակով պայմանավորված հավաքական լուծումների տեսանկյունից, ինչպես նաև հաշվի առնելով զբաղվածության ոլորտում հաստատված ռազմավարական նպատակադրումներն ու գերակայությունները՝ օբյեկտիվորեն նպատակահարմար է ամենամյա ծրագրերին պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցների հետևողական ավելացում՝ տարեկան առնվազն 5-10%-ով:

2. Զուգահեռաբար, աշխատաշուկայի առկա հիմնախնդիրները, անորոշությունները և նոր մարտահրավերների դիսկալնության բարձր աստիճանը օբյեկտիվորեն պահանջում են ամենամյա ծրագրերում պահուստային միջոցների նախատեսում՝ տվյալ տարվա ամենամյա ծրագրին պետական բյուջեով հատկացված ֆինանսական միջոցների մինչև 10%-ի չափով¹⁸: Պահուստային ֆինանսական միջոցները պետք է ունենան ծրագրային հիմք: Այսպիսով ապահովված կլինի օպերատիվ կառավարման հնարավորություն: Պահուստային միջոցները կարող են ապահովել իրավիճակից բխող նոր խնդիրներին արագ հակազդում՝ զբաղվածության հակաճգնաժամային պետական նոր ծրագրերի իրագործմամբ: Այս նպատակադրմամբ ծախսելու անհրաժեշտության բացակայության դեպքում պահուստային միջոցները կարող են վերաբաշխվել ընթացիկ տարվա չորրորդ եռամսյակում և ուղղվել առարկայական պահանջարկ և կատարողական բարձր արդյունավետություն ունեցող ծրագրերին: Այսպիսով, հնարավոր կլինի նաև սահմանափակել և կառավարելի դարձնել զբաղվածության պետական ծրագրերին պետական բյուջեով հատկացված ֆինանսավորման միջծրագրային վերաբաշխումների գործընթացները:

¹⁸ Նշված չափի առաջարկի համար հիմք են հանդիսացել սույն հետազոտության շրջանակում իրականացված՝ զբաղվածության 2018-2019 թթ. պետական ծրագրերի միջծրագրային ընթացիկ վերաբաշխումների, ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների կատարողականների ամփոփ գնահատումները, ինչպես նաև ներդրված ծրագրային բյուջետավորման շրջանակում ամենամյա ծրագրի ընթացիկ վերաբաշխումների թույլատրելի առավելագույն սահմանաչափի մեր փորձագիտական գնահատումը:

3. Միջծրագրային ընթացիկ վերաբաշխումների տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել ամենամյա ծրագրով նախատեսված ծախսարդյունավետության միջին ցուցանիշի հնարավոր նվազումը: Այս նպատակով հարկավոր է ամենամյա ծրագրերում թիրախավորել նաև ծախսարդյունավետության միջին ցուցանիշը և ընթացիկ վերաբաշխումների պարագայում դրա նվազման թույլատրելի առավելագույն սահմանները:

4. Զբաղվածության պետական աջակցության ձևերը կարելի է դասակարգել հինգ հիմնական խմբերի՝ ըստ այդ ծրագրերով նախատեսվող պետական աջակցության բնույթի և ներուժի, մասնավորապես՝ ծրագրեր և ծառայություններ, որոնց անմիջական արդյունքը՝

- շահառուին հարմար աշխատանքի տեղավորման միջոցով նրա կայուն զբաղվածության ապահովումն է,
- հարմար աշխատանքի տեղավորման նպատակով շահառուի աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռք բերումն ու զարգացումն է, ինչպես նաև լրացուցիչ հնարավորությունների ընձեռումը,
- առանձին խումբ շահառուների աջակցությունն է՝ աշխատանքը կորցնելու ռիսկի կանխարգելման նպատակով,
- շահառուի ինքնազբաղվածության միջոցով նրա կայուն զբաղվածության ապահովումն է,
- շահառուի ժամանակավոր զբաղվածության ապահովումն է:

Ընթացիկ իրավիճակից բխող զբաղվածության ոլորտի հիմնախնդիրներով պայմանավորված՝ առաջնային կարևորություն են ստանում առաջին և երրորդ խմբերում ներառված զբաղվածության պետական ծրագրերն ու ծառայությունները: Միջնաժամկետում այս ծրագրերին պետական բյուջեից հատկացվող միջոցները պետք է ունենան առաջանցիկ աճի կայուն միտում: Մյուս կողմից, առաջին խմբի ծրագրերի կայուն զբաղվածության ապահովման արդյունքային ցուցանիշների թիրախավորումը նպատակահարմար է յուրաքանչյուր տարի ավելացնել և առնվազն ապագա միջնաժամկետում դրանց միջին մեծությունը հասցնել այդ ծրագրերի իրական ներուժին՝ ապահովելով 90-95% կայուն զբաղվածության գործակից:

5. Հաջորդ տարվա ամենամյա ծրագրի համար նախատեսվող ֆինանսական միջոցների միջծրագրային վերաբաշխման հիմքում պետք է դրվեն այդ ծրագրերի՝ նախորդ միջնաժամկետում ունեցած կատարողական համալիր գնահատումները՝ ծրագրված և փաստացի ապահովված ֆինանսական ու ոչ ֆինանսական ցուցանիշների շեղումները, դրանց միտումները, պատճառահետևանքային հիմնական գործոնները: Հակառակ պարագայում, առնվազն հիմնավոր չէ այն պրակտիկան, որ զբաղվածության պետական միջառնությունները անընդհատ և 50-60%-ի չափով թերակատարվում են, սակայն հաջորդ տարվա համար այդ ծրագրերով նախատեսվում են նախորդ տարիների փաստացի կատարողականներից մինչև կրկնակի ավելի ֆինանսական միջոցներ: Հատկանշական օրինակ՝ անասնապահությամբ զբաղվելու համար աջակցության ծրագիրն ունի փաստացի իրականացման անհամեմատ մեծ ներուժ, քան նախատեսվում է ամենամյա ծրագրերում, մասնավորապես՝ ծրագրի 2019 թ. փաստացի կատարողական ցուցանիշը շուրջ 22 անգամ գերազանցում է 2019 թ. համար նախատեսված ցուցանիշը և 16 անգամ էլ՝ 2020 թ.

համար նախատեսված ցուցանիշը: Նույնը վերաբերում է նաև փոքր ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար աջակցության ծրագրին: Կան նաև զբաղվածության պետական որոշ ծրագրեր, որոնց պլանավորումը կատարվում է ճիշտ հակառակ ձևով: Զբաղվածության պետական որոշ ծրագրերի կատարողական և պլանային ցուցանիշները գրեթե չեն ունենում շեղումներ, այսինքն՝ այս ծրագրերն ունենում են գրեթե 100% ֆինանսական և ոչ ֆինանսական կատարողականներ: Սակայն այս ծրագրերն ունեն ավելի մեծ իրական պահանջարկ՝ առնվազն կրկնապատկվելու առարկայական ներուժ: Օրինակ, 2019 և 2020 թթ. համար նախատեսված ցուցանիշի չափով, 2019 թ. փաստացի իրականացվել է աշխատանքի 10 տոնավաճառ:

6. Ծրագրերի ներուժի լիարժեք գործադրման առումով խնդրահարույց է այն, որ ամենամյա ծրագրից հանվել են զբաղվածության պետական գործակալության աշխատանքի արդյունավետության գնահատման որոշ ցուցանիշներ: Խոսքը վերաբերում է զբաղվածության տարածքային կենտրոնների միջնորդությամբ և ծրագրերի արդյունքում աշխատանքի տեղավորվածների ցուցանիշներին: Հաջորդ տարիների ամենամյա ծրագրերում օբյեկտիվորեն անհրաժեշտ է ներառել և լիարժեքորեն թիրախավորել արդյունքային այս ցուցանիշները, որոնք առկա չեն 2020 թ. ծրագրում:

7. Հաջորդ տարիների համար ամենամյա ծրագրերի մշակման ընթացքում պետք է հավաքական լուծում ստանան համակարգային բնույթ ունեցող վերը նշված խնդիրները: Առաջնային պետք է հաշվի առնվեն զբաղվածության պետական յուրաքանչյուր ծրագրի կատարողականի և ազդեցության իրական ներուժը, այլ ոչ թե դրանց իրականացման օբյեկտիվ աշխատատարությունը: Միաժամանակ, պետք է լիարժեքորեն հաշվի առնվեն զբաղվածության ոլորտին վերաբերող միջնաժամկետ և հեռանկարային զարգացման արդյունքային ցուցանիշները և անհրաժեշտ համամասնություններով արտացոլվեն ամենամյա ծրագրերում:

Եզրակացություններ: Իրավական և ծրագրային ամրագրում ստացած զբաղվածության պետական քաղաքականության հիմնադրույթները կյանքի կոչելու տեսանկյունից գործնականում անկյունաքարային հավասար գործոններ են՝

- աշխատաշուկայի իրավիճակից բխող՝ իրական մարտահրավերներին և պահանջներին համարժեք, չափելի արդյունքներով ամենամյա ծրագրի մշակումը և առաջնահերթությունների հաստատումը,
- ամենամյա ծրագրի իրականացման շրջանակներում նպատակայնության, ամբողջականության, իրավիճակային ճկուն և առարկայական փոփոխությունների, թիրախավորման համապատասխանության և ծախսարդյունավետության հավաքական ապահովումը:

1. Ամենամյա պետական ծրագրերում նախատեսված չեն եղել պահուստային ֆինանսական միջոցներ: Այս միջոցներով անհրաժեշտ է ապահովել ծրագրային օպերատիվ կառավարում՝ աշխատաշուկային ճկուն արձագանքման հնարավորությամբ: Մյուս կողմից, պահուստային ֆինանսավորման նախատեսումն օբյեկտիվորեն սահմանափակում է միջծրագրային վերաբաշխման հնարավորությունը: Հակառակ պարագայում, շարունակաբար ձևավորվում են ամենամյա ծրագրով թիրախավորված ակնկալվող արդյունքների և

փաստացի ստացված արդյունքների էական շեղումներ, իսկ նպատակային կառավարումն իրականում դառնում է անհնար:

2. Զբաղվածության պետական ծրագրերի մշտադիտարկման միջոցով է հնարավոր զբաղվածության պետական ծրագրերի՝ թիրախային ցուցանիշներից ընթացիկ շեղումների արագ բացահայտման և պատճառների վերացման լուծումների գործադրման լիարժեքությունը և արդյունավետությունը, որոնք պահանջում են անհրաժեշտ տեղեկատվության և հաշվետվությունների ինքնաշխատ եղանակով ստացում և հասանելիության ապահովում:

3. Զբաղվածության պետական ծրագրերի որոշ կառուցակարգեր բացասական ազդեցություն ունեն ծրագրերի ծախսարդյունավետության տեսանկյունից: Մյուս կողմից, օբյեկտիվորեն անհրաժեշտ սահմանափակումները հանելու կամ նվազեցնելու միջոցով էապես հեշտացվել են այդ ծրագրերի իրականացման գործընթացները, որի արդյունքում 2019 թ. ապահովվել է բարձր կատարողական: Զբաղվածության պետական աջակցության արդյունքում կարևոր է ոչ միայն աշխատանքի տեղավորված կամ ինքնազբաղված անձանց քանակը, այլ վարձու աշխատողի կամ ինքնազբաղված անձի կարգավիճակում նրանց մնալու տևողությունը և այդ ընթացքում նրանց ստացած եկամուտների, վճարած եկամտային հարկի և ստացած աջակցության չափերի հարաբերակցությունը:

4. Պետական աջակցությամբ «նպաստից դեպի օրինական աշխատանք» նպատակադրումը լիարժեքորեն կյանքի կոչելու համար իրականում անհրաժեշտ է ոչ թե նպաստի տրամադրման ժամկետի որոշակի երկարաձգում, որն իրականացվել է 2019 թ. փոփոխություններով, այլ զբաղվածության պետական ծրագրերի վերաիմաստավորում և համարժեք աջակցության ներուժի ապահովում: Այս իմաստով, առավել հատկանշական են զբաղվածության պետական այն ծրագրերն ու ծառայությունները, որոնց անմիջական արդյունքը շահառուին հարմար աշխատանքի տեղավորման կամ ինքնազբաղվածության միջոցով նրա կայուն զբաղվածության ապահովումն է:

5. Իրականացված կառուցակարգային դրական փոփոխություններն են. որոշակիորեն բարելավվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին տրվող աշխատավարձի մասնակի փոխհատուցման պայմանները: Սեզոնային ժամանակավոր աշխատանք կատարող անձանց ընտանիքներն այդ աշխատանքը կատարելու պատճառով սոցիալական աջակցության պետական ծրագրերից օգտվելու հնարավորությունից չեն զրկվում: Զբաղվածության կարգավորման պետական ծրագրերի հասցեականությունը մեծացնելու և շահառուների շրջանակն ընդլայնելու նպատակով աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման չափանիշները լրացվել են նոր չափանիշներով:

6. 2019-2020 թթ. ամենամյա ծրագրերի և դրանց կատարողական ցուցանիշների համեմատական գնահատումների արդյունքում վեր են հանվել որոշ խնդիրներ, որոնք վերաբերում են զբաղվածության պետական ծրագրերի և ծառայությունների թիրախավորման և փաստացի ապահովման շեղումներին: Մյուս կողմից, նախորդ տարվա համեմատ, 2020 թ. ծրագրում նվազեցվել են արդյունքային որոշ ցուցանիշներ: Արդյունքային որոշ ցուցանիշներ, որոնք թիրախավորում են ունեցել նախկինում, այլևս չեն թիրախավորվել 2020 թ. ծրագրով: Ընթացիկ արդյունքների թիրախավորումների նվազե-

ցումը և ոչ լիարժեք ապահովումը խորացնում են խզումը ռազմավարական նպատակադրումներից: Այս խնդիրները, ընդհանուր առմամբ, վերաբերելի են նաև նախորդ միջնաժամկետ հատվածին, և անհրաժեշտ է լիարժեք կերպով հաշվի առնել հետագա տարիների ամենամյա ծրագրերի մշակման գործընթացներում:

7. Զբաղվածության պետական կարգավորման ներուժի ավելացման գնահատված հնարավորություններն ու գործադրման առաջարկներն առանձին կետերով բերված են սույն հոդվածի վերլուծական բաժնի վերջում:

Օգտագործված գրականություն

1. «Աշխատիր, Հայաստան» ռազմավարություն՝ հաստատվել է ՀՀ Կառավարության 2019 թ. դեկտեմբերի 5-ի N 1753-Լ որոշմամբ:
2. «Զբաղվածության մասին» 2013 թ. դեկտեմբերի 11-ի ՀՕ-152-Ն ՀՀ օրենք:
3. ««Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող մի շարք իրավական ակտեր հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի N 534-Ն որոշում:
4. «Զբաղվածության կարգավորման 2019 թ. պետական ծրագիր»՝ հավանություն է տրվել ՀՀ Կառավարության 2018 թ. սեպտեմբերի 27-ի N 1024-Լ որոշմամբ:
5. «Զբաղվածության կարգավորման 2020 թ. պետական ծրագիր»՝ հավանություն է տրվել ՀՀ Կառավարության 2019 թ. սեպտեմբերի 30-ի N 1290-Լ որոշմամբ:
6. «ՀՀ Կառավարության ծրագիր»՝ հավանություն է տրվել ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 8-ի N 65 - Ա որոշմամբ:
7. «ՀՀ 2020-2022 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր»՝ հաստատվել է ՀՀ Կառավարության 2019 թ. հուլիսի 10-ի N 900-Ն որոշմամբ:
8. «ՀՀ Կառավարության ծրագրի 2018 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց»՝ հավանություն է տրվել ՀՀ Կառավարության 2019 թ. փետրվարի 28-ի N 141 - Ա որոշմամբ:
9. «ՀՀ Կառավարության ծրագրի 2019 թ. կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույց»՝ հավանություն է տրվել ՀՀ Կառավարության 2020 թ. փետրվարի 27-ի N 199 - Ա որոշմամբ:
10. Campbell D., Ronnas P., Sargsyan A. (in alphabetical order) A Rapid Assessment of the Employment Impact and Policy Responses of the Covid-19 Pandemic on Armenia, International Labour Organization, August 2020.
11. Summers L., Persistent Jobless Growth, World Economic Forum, 2015 - <http://reports.weforum.org/outlook-global-agenda-2015/top-10-trends-of-2015/2-persistent-jobless-growth/>.
12. <https://www.arlis.am>
13. <https://www.gov.am>
14. <http://www.mlsa.am>

ЗОЯ ТАДЕВОСЯН

*Профессор кафедры международных экономических отношений АГЭУ,
доктор экономических наук*

ТАДЕВОС АВETИСЯН

*Доцент кафедры международных экономических отношений АГЭУ,
кандидат экономических наук*

Теоретические и практические вопросы государственной политики занятости. – В рамках данной научной статьи был проведен всесторонний анализ институциональных и текущих результатов государственных программ занятости и услуг. Государственные программы занятости и услуги были классифицированы на пять основных групп – по характеру государственной поддержки занятости, ожидаемым и фактически полученным основным результатам. Таким образом, стала возможной глубинная оценка текущих задач государственного регулирования занятости и возможностей увеличения их потенциала, вытекающих из современных требований рынка труда. На основе итоговых результатов исследования, в том числе с точки зрения COVID-19, разработаны основные направления и системные решения текущих реформ государственных программ занятости. Представлены также всесторонние обоснования предлагаемых решений, обобщенные оценки возможного влияния государственных программ на обеспечение стабильной и временной занятости потенциальных бенефициаров.

Ключевые слова: рынок труда, стабильная и временная занятость, программа регулирования занятости, координатор, неконкурентоспособное лицо на рынке труда, безработный.
JEL: C50, E01

ZOYA TADEVOSYAN

*Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
Doctor of Economics*

TADEVOS AVETISYAN

*Associate Professor at the Chair of International Economic Relations at ASUE,
PhD in Economics*

Theoretical and Practical Issues of State Employment Policy. – This research paper provides a comprehensive analysis of the institutional and current results of government employment and service programs. State employment programs and services were classified into five main groups – by the nature of state support for employment, expected and actually received main results. Thus, it became possible to assess in-depth the current tasks of state regulation of employment and opportunities

to increase their potential, resulting from the current requirements of the labor market. Based on the final results of the study, including from the point of view of COVID-19, the main directions and system solutions of the current reforms of state employment programs were developed. Comprehensive justifications of the proposed solutions and generalized assessments of the possible impact of state programs on ensuring stable and temporary employment of potential beneficiaries are also presented.

Key words: *labor market, stable and temporary employment, employment regulation program, coordinator, a non-competitive person at the labor market, unemployed.*

JEL: C50, E01